ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «10» սեպտեմբեր 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 207-Ա/Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ - 2025» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով» և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի N 1694-Ա/2 հրամանը՝ «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում - 2025» մրցույթը պատշաճ կազմակերպելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Աստղիկ Մելիք-Քարամյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը, մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:
2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Արսեն Հակոբյան)՝
   1) ապահովել մրցույթի հայտ ներկայացնող գիտահետազոտական խմբերի համար խորհրդատվության տրամադրումը,
   2) կազմակերպել հայտերի թղթային տարբերակների ընդունումը,
   3) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,
   4) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտահետազոտական խմբերի ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը,

5) կազմակերպել մրցույթի արդյունքներով շահառու ճանաչված նախագծերի իրականացման համար ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրերի կնքումը:

3. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝

1) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը,

2) ապահովել նախագծերի իրականացման համար ֆինանսական աջակցության գումարների սահմանված կարգով տրամադրումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ
(պարտականությունները կատարող)